



## **ՖՖՖ ԿԱՐԳԱՊԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ**

*Չաստատված է ՖՖՖ գործադիր կոմիտեի 2020 թվականի մայիսի 15-ի նիստին ընդունված արձանագրային որոշմամբ և ուժի մեջ է մտնում հաստատման պահից*

---

### **Չոդված 12.1. Ապացուցումը կարգապահական վարույթում**

- 12.1.01. Իրավասու կարգապահական մարմինը ապացույցների գնահատումն իրականացնում է բացառապես ինքնուրույն:
- 12.1.02. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցության մեջ՝ բավարարության տեսանկյունից:
- 12.1.03. Կարգապահական մարմինը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

---

### **Չոդված 13.1. Ապացույցների տեսակները**

- 13.1.01. Ցանկացած ապացույց, որը չի խախտում մարդու արժանապատվությունը, կարող է օգտագործվել կարգապահական վարույթի ընթացքում: Կարգապահական վարույթի շրջանակներում որպես ապացույց կարող են օգտագործվել պաշտոնական զեկույցներ և արձանագրություններ, վկաների հարցաքննություններ, կողմերի և ՖՖՖ պաշտոնյաների հարցաքննություններ, տեղանքի զննություններ, փորձագետների կարծիքներ, հեռուստահաղորդումներ և տեսաձայնագրություններ, անհատական խոստովանություններ, այլ փաստաթղթեր և նյութեր (այդ թվում՝ շահումով խաղերում խարդախությունների մասին հաղորդումներ):
- 13.1.02. Կարգապահական մարմինները կարող են ցանկացած դեպքում պահանջել հավելյալ ապացույցներ:
- 13.1.03. ՖԻՖԱ-ի, ՈւԷՖԱ-ի և ՖՖՖ-ի պաշտոնական զեկույցներում ներառված փաստերը համարվում են հավաստի: Այդուհանդերձ, վարույթի ընթացքում կարող են ներկայացվել այդ փաստերի ոչ հավաստի լինելու մասին ապացույցներ: